ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

ք. Երևան «15» մարտի 2024թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 17-Ա[1]

ՍԱԹԵՆԻԿ ԿԱՐՈՅԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 792-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի 2-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ, 151-րդ կետերը և Սաթենիկ Սահակյանի անձնական դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Սաթենիկ Կարոյի Սահակյանին 2024 թվականի մարտի 18-ից նշանակել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի քարտուղարության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 18-4-29.5-Մ2-1) և լուծել նրա հետ 2024 թվականի փետրվարի 12-ին կնքված N 02 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. Սաթենիկ Կարոյի Սահակյանի ամսական աշխատավարձը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքին համապատասխան:

Կ. ՂԱՐԻԲՅԱՆ
(պարտականությունները կատարող)